

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ՀՍՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՈՒՐՁԸ

II

Համալսարանը իր նուիրական միասին կատարելու համար պէտք է հիմնուի այնպիսի միջավայրում, որ կարող լինի նրան աջակից լինել, դիւրացնել ու կարելի դարձնել նրա կուլտուրական գործունէութիւնը:

Բաւական չէ որևէ քաղաքում համալսարան բացուի, չքեղ ապարանք յատկացուի նրան, պրօֆէսորների որոշ թիւ ունենայ:

Այս բոլորը ձևական կողմերն են միայն և չեն կարող համալսարանին տալ այն հարկաւոր բարձրութիւնը, որ անհրաժեշտ է մի ընդհանուր կրթական բարձրագոյն հաստատութեան:

Համալսարանին նախ և առաջ հարկաւոր է ընդունող, ըմբռնող հող, որ նուիրական հաստատութեան ամեն մի փորձ համակրութեամբ շրջապատուի:

Համալսարանը միայն տեսական պատրաստութիւն չէ տալիս մատաղ սերնդին, միայն գիտութեան պաշար չէ ներշնչում, այլ և դաստիարակում է հասարակութեան ապագայ անդամներին. իսկ այդ կրթիչ, դաստիարակիչ դերը նա անկարող է առանց այն միջավայրի, ուր վիճակուած է նրան գործել:

Եթէ մենք այսօր ձգտում ենք ուղարկել մեր զաւակներին համալսարանական քաղաքները — Պետերբուրգ, Մոսկուա, Օդեսսա, Խարկով, Կիեւ և այլ տեղ, նոյնիսկ արտասահման, այդ նրա համար է, որ այդ քաղաքներից իւրաքանչիւրը բացի համալսարանական քաղաք լինելուց իրանցից ներկայացնում են նաև կուլտուրական նշանաւոր կենդրոններ, ուր կեանքը ինքնին մի համալսարան է մատաղ սերնդի համար:

Սակայն Վլադիկաւկազը չի կարող Կովկասի շատ ու շատ քաղաքների՝ մասնաւորապէս Թիֆլիզի վերաբերմամբ քաղաքակրթիչ դեր ստանձնել:

Այնտեղ բացուող համալսարանը անզօր կը լինի իր զարգացման, լայն գործունէութեան համար պատրաստի հող գտնել և հէնց առաջին օրից պէտք է դժուարութիւնների հանդիպի կրթական բարձր գործին ծառայելու համար:

Ի՞նչ պիտի ասի Վլադիկաւկազի համալսարանը Կովկասին — ոչինչ: Բագուի, Թիֆլիզի, Բա-

թումի և մանաւանդ կրթական-կուլտուրական հին կենդրոններին աւելի մօտ հիւսիսային Կովկասի քաղաքների ազգաբնակութեանը՝ մի անգամ արդէն սպանդութեան ցուպը տալով իրենց զաւակներին, մի անգամ արդէն դէպք համալսարան ուղղելով նրանց բայլերը՝ չեն կարծում թէ իրենց կէտ նպատակ ունենան Վլադիկաւկազը: Կովկասի ազգաբնակութեան համար հին կուլտուրական կենդրոնները դարձեալ չեն կորցնիլ իրենց ձգտող ոյժը և մեր սերունդը կը շարունակի դիմել դարձեալ դէպք հին համալսարանները:

Եւ Վլադիկաւկազի համալսարանը — Կովկասի համար հիմնուող այդ բարձրագոյն կրթական հաստատութիւնը — Կովկասին ոչինչ չասող մի հիմնարկութիւն կը մնայ, զուտ տեղական գոնաւորութեամբ:

Որքան աւելի է հակադրում Թիֆլիզի Կովկասի մի այլ քաղաք, այնքան աւելի է պարզուում, որ միակ վայրը, ուր կարող է համալսարանը պատրաստի հող գտնել իր հիմնարկութեան ու ապագայ զարգացման համար — այդ միակ վայրը, որտեղ համալսարանը կարող է իր կրթիչ-դաստիարակիչ լուսաւոր ճառագայթներ սփռել ամբողջ Կովկասի վրայ:

Այո, Թիֆլիզը և միայն Թիֆլիզն է, որ մտաւոր բարոյական զարգացման աստիճանութե իբրև քաղաք և թէ իբրև Կովկասի կենդրոն, պատրաստ է ամեն կերպ Կովկասեան համալսարանի — համառուսական կուլտուրական նոր օջախի ծննդավայր դառնալ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՉՈՐՍՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ

Ուղիղ չորս հարիւր տարի է անցել այն րից, ինչ լոյս աշխարհ է տեսել առաջին հայրէն տպագիր հատորը — Սատուածասունչը:

Օտար երկնակամարի տակ է ծնունդ առ մեր տպագրական խօսքը և երկար տարին պանդխտութեան մէջ գեղեցիկուց յետոյ միւս մայրենի երկիր է մուտք գործել:

Չի կարելի ասել, թէ հարազատ գիրը մէջ հարկաւոր ընդունելութիւն է գտել առ օրից և եթէ. Ընդհակառակը՝ նրա զարգացումը

մանաւանդ նրա առաջին երեք դարերի ընթացքում՝ եղել է շատ դանդաղ և միաժամանակ նաև միակողմանի։

Երբ թերթում ես մեր գրական, պատմութիւնը, աչքի անցնում հրապարակի վրայ գրուած տպագրական անցեալը, աչքի է զարնում մեր տպագրական խօսքի ազքատութիւնը։ Չորս հարիւր տարի է անցել և ինչ է մեր կատարած գրի արդիւնքը այդ դարերի ընթացքում։

Անշուշտ աննպաստ շրջապատը, դժուար պայմանները, երկրի կիսավայրենի գրութիւնը արգելադրութ պատճառներ էին գրի և գրակառութեան ծաղկման համար, բայց ի նկատի առնելով այդ բոլորը՝ այնուամենայնիւ պէտք է խոստովանել, որ մենք մեր գրին հարկաւոր յարգանքն ու ընդունելութիւնը չենք տուել անցեալում և կատարել ենք շատ աւելի քիչ բան, քան կարող էինք անել։ Մենք նոյնիսկ անկարող ենք եղել մայր երկրում ստեղծել գէթ մի հատիկ տպարանական կենդրոն, որ գոնէ յիշեցնէր շատ հեռաւոր կերպով Անեատիկն ու Վիեննան։

60-ական թուականներից սկսում է մեր տպագրական խօսքի վերածնութիւնը։ Մինչդեռ մինչ այն՝ հայ գրով հետաքրքրուում էր ժողովրդի շատ սահմանափակ դասը—ուսումնասէր վանականները։ 50-ական թուականներից հրատարակ են իջնում ժողովրդի զաւակները և զարկ են տալիս մայրենի լեզուին։

Այնուհետև մեր տպագրական խօսքը արագ սկսում է զարգանալ, հետաքրքրողների յայն չրջան ստեղծել։

Հայ գիրը դուրս է գալիս իր նախնական—հին շրջանից և մտնում նոր եւրոպականացած շրջան։

Բայց չնայած մեր տպագրական խօսքի վերջին մի քանի տասնեակ տարիներում արած մեծ քայլերին, այնուամենայնիւ պէտք է դարձեալ ասենք, որ նա այսօր էլ դեռ հարկաւոր բարձրութեան չէ հասած և հայկական տպագրութեան 400-ամեակը մինոր դարագլուխ պիտի լինի հայ հասարակութեան համար՝ յաւերժացնելու հայ գրի այս պատմական օրը այնպիսի մի վեհ ու գեղեցիկ գործով, որ նոր զարկ տայ մեր գրին ու գրականութեան ծաղկման ու զարգացման։

Սկսում ենք այսօրուանից մեր թերթի մէջ արտատպել պ. Այսոյանճեանի ուշագրաւ յօդուածների շարքը, որից մեր ընթերցողները մի ամփոփ գաղափար կկազմեն հայ տպագրութեան մասին։

ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿՍՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ
(Տպաւորութիւններ)

IV

Որքան մօտենում էր ընտրական պայքարի վճռական օրը, այնքան աւելի անտարբեր էր էջմիածինը մի կողմից, Կ. Պօլսը միւս կողմից։

Թէ մէկը և թէ միւսը, որ այնքան ջանքեր էին թափել, բոլորն էլ կասկածով ու անվստահ սպասում էին դեկտեմբերի 12-ի օրը, երբ պէտք է որոշուէր Հայրապետական Աթոռի բաղլը։

Այսպիսի ջղային անհամբեր գործունէութեան մէջ չպէտք է գորմանալ, որ մարդիկ մոռանում էին, թէ ինչ է կարելի, թոյլատրելի և ինչ անկարելի։

Մամուլը երևան հանեց,—ընտրական գործին էլ կցուած է, միջանիստ այն ապօրինութիւններից, որոնց մասին մենք ուզում ենք միջանի խօսք ասել մեր տպաւորութիւնների ներկայ յօդուածում։

Սակայն յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ մենք անկարող ենք թուել և աչքի անցնել այն բոլոր գեղծումներն ու ապօրինութիւնները, որոնք տեղի են ունեցել ընտրական ամբողջ գործում և որոնց մասին խօսել են օրաթերթերը։ Դրա համար մեզ կը պակասի չաքթաթերթի էջերը, կը պակասի ժամանակը և ապա պէտք է նկատենք, որ շատերի հետ ծանօթ կը լինեն արդէն մամուլից, օրաթերթերից, որոնք միջոց ունէին մեզից շատ աւելի շուտ հաղորդել նորութիւններ։

Մամուլը, առևտհայ և տաճկահայ, հաղորդեց որ էջմիածին մեկնած պատգամաւորներից միջանիստ մեկնել են Կ. Պօլսից առանց իմանալու թէ նրանք ո՞ր գաւառի, ո՞ր թեմի ներկայացուցիչ են լինելու։ Ուրեմն այդ մասին հոգացողը մնացել է Կ. Պօլսում, իսկ ապագայ պատգամաւորացուն կամ պատգամաւորական թեկնածուն արդէն նաւումն է եղած։

Նոյնպէս փաստ է, որ դարձեալ մամուլը արձանագրեց, որ այս ինչ կամ այն ինչ կաթ. թեկնածուի բարեկամը կամ հակառակորդը իր գրպանից առատ կամ ժլատ ճանապարհածախքեր է բաժանել այս կամ այն գաւառի կամ թեմի տաճկահայ ողորմելի պատգամաւորին, որ նա գնայ էջմիածին ու ում ուզում է ընտրէ, միայն սեպցնի այս ինչ եկեղեցականին, որի հետ նա անձնական հաշիւ ունի—նոյնիսկ ասում էին, թէ ինչ հաշիւ—նախկին յայտնի պատրիարքը յօգուտ ազգի է վերածել մի կտակ և թոյլ չի տուել, որ այդ մի մասնաւոր անձը կլանէ։ Այդ «յանցանքի» համար անշուշտ նա—զրկուած հայր իրեն «ճշմարիտ» հայ իբրաւունք ունէր վրէժխնդիր լինելու էջմիածնական-Պօլսական տխրահռչակ ականա-